ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 53. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

1

Մշակույթի այդ նոր գործիչների ուշադրության կենտրոնում էին գտնվում մարդը և նրա գործերը. ահա ինչու նրանց անվանում էին **հումանիստներ՝** «հյումանուս – մարդկային» բառից: Հումանիստների համոզմամբ, բազմակողմանի զարգացած մարդու մեջ գեղեցիկ էր ամեն ինչ: Կյանքի նպատակը և բարձրագույն երջանկությունը նրանք համարում էին ոչ միայն աստծուն ծառայելը, այլև մարդու կամքի ու գիտակցության զարգացումը, նրա ունակությունների դրսևորումը ստեղծագործական աշխատանքում:

Իտալիայում անտիկ մշակույթի բազում նմուշներ էին պահպանվել՝ հոյակապ շինություններ, գեղեցիկ արձաններ, գրական ստեղծագործություններ: Հումանիստները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Հին Հունաստանի և Հռոմի մշակույթի նկատմամբ, ուսումնասիրում էին հունարեն և լատիներեն հին ձեռագրերը, կրկնօրինակում էին արվեստի հին գործերը՝ փորձելով բացահայտել դրանց գեղեցկության գաղտնիքը: **Անտիկ մշակույթը, որը մասամբ մոռացվել էր նախորդ դարերում, կարծես նորից վերածնվում էր:**

Դանթե Ալիգերի

Ֆրանչեսկո Պետրարկա

Ջոտտո, «Մոգերի երկրպագությունը», Արենա մատուռ



Բոտտիչելլի, «Վեներայի ծնունդը»

Բրունելեսկի, Ֆլորենցիայի Մայր տաճարը

3

Լեոնարդոն գիտության մեջ փնտրում էր նոր ուղիներ, ուսումնասիրում էր թռչունների թռիչքը՝ ձգտելով լուծել օդանավ կառուցելու խնդիրը: Լեոնարդոն կատարել է բազմաթիվ հայտնագործություններ մաթեմատիկայի, մեխանիկայի, բնագիտության, ֆիզիկայի, քիմիայի և երկրաբանության բնագավառներում: Նրա ձեռագրերը երկար ժամանակ մնում էին անհայտ և հրատարակվել են միայն վերջին տասնամյակներում:

Կզաքիսով տիկինը



Լեոնարդո դա Վինչի. Ինքնանկար



Մոնա Լիզա Ջոկոնդա

Խորհրդավոր ընթրիքը

Սիքստինյան տիրամայրը



Ռաֆայել Սանտի

Աթենական դպրոցը



Մովսես մարգարե

Միքելանջելո

Ահեղ դատաստանը

Վատիկանի պալատը և հրապարակը

Յուրացնելով իտալական վարպետների նվաճումները՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի արվեստագետները համաշխարհային մշակույթի նոր արժեքավոր գործեր ստեղծեցին, ***ինչը ընդունված է անվանել «Հյուսիսային Վերածնունդ»:*** Այն իր հերթին նպաստեց կաթոլիկ եկեղեցու գերիշխանության դեմ այդ երկրներում սկսված ռեֆորմացիոն պայքարի ծավալմանը:

Հումանիզմի գաղափարները իրենց արտահայտությունը գտան Նիդերլանդներում՝ ***Էրազմ Ռոտերդամցու*** *«Գովք հիմարության»,* Ֆրանսիայում՝ ***Ֆրանսուա Ռաբլեի*** *«Գարգանտյուա և Պանտագրյուել»,* Անգլիայում՝ ***Թոմաս Մորի*** *«Ուտոպիա»* և ***Վիլյամ Շեքսպիրի*** *«Համլետ», «Ռոմեո և Ջուլիետ»* գրական ստեղծագործություններում:

Էրազմ Ռոտերդամցի

Թոմաս Մոր

Վիլյամ Շեքսպիր

Այցելելով Իտալիա և ծանոթանալով Վերածննդի տիտանների գեղանկարչությանը՝ եվրոպացի նկարիչները սկսեցին իրենց ստեղծագործություններում նույնպես արծարծել անհատականության, գեղեցկության և ներդաշնակության գաղափարները: «Հյուսիսային Վերածննդի» աչքի ընկնող նկարիչներից էին՝ Նիդերլանդներում՝ ***Յան վան Էյկը, Պիտեր Պաուլ Ռուբենսը, Ռեմբրանդտ վան Ռեյնը,*** Ֆրանսիայում՝ ***Ֆուկեն, Գուժոնը, Կուեն,*** Գերմանիայում՝ ***Ալբրեխտ Դյուրերը, Լուկաս Կրանախ Ավագը*** և այլք:

Վան Էյկ
Ռոլենի Աստվածամայրը

Ռուբենս
Վեներան և Մարսը

Ալբրեխտ Դյուրեր
Ինքնանկար

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ և ՓԱՍՏԵՐ

Ֆլորենցիա

Իտալական Ֆլորենցիա քաղաք-պետությունում է սկիզբ առել Վերածնունդը: XIV դ. վերջին այն առևտրաշահ հարուստ քաղաք էր: Այդ քաղաքի առևտրական և գործարար մարդիկ իրենց դրամական միջոցների զգալի մասը օգտագործում էին՝ աջակցելու նկարիչներին, արվեստագետներին, մտավորականներին մարդակենտրոն գործեր ստեղծելու:

Լեոնարդո դա Վինչիի մասին

Ֆլորենցիա քաղաքի բնակիչները Լեոնարդոյին միշտ տեսնում էին անթերի հագնված: Նա քաղաքի փողոցներում քայլում էր հպարտ և ինքնավստահ: Վերածննդի տիտանը բարձրահասակ էր, գեղեցիկ խնամված մորուքով, բերետը գլխին, իսկ գոտուց կախված շղթային միշտ ամրացված էր փոքրիկ մի ալբոմ, ուր ձեպանկարներ էր անում և նոթեր գրում: Մարդկանց թվում էր, թե նա մեծահարուստի նման է աշխատում և մեծահարուստի նման էլ ապրում է: Իրականում Լեոնարդոն աղքատ էր և աղքատի պես էլ ապրում էր: